ստորնագոյն եկեղեցական պաշտօնեաներ ձեռնադրելու. ինչպէս թէոդորոս կաթողիկոսը յետ զՅովհաննէս եպիսկոպոս ձեռնադրելու՝ կը ծանուցանէ ժողովրդեան տուած իրաւասութիւնը. «կոչեսցէ զարժանաւորսն և զվկայեալսն ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան և քահանայութեան։ կալցի հրամանովս մեր ի վերայ ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձակել յերկինս և յերկրի»։

Կարգ և կանոնը դեռ հետեւեալ ընտրութեանց իշխանութիւնը կաթողիկոսին կը յատկացնէ։

ը. — «կաթողիկոսն իր եկեղեցւոյ նախնի կարգերուն և կանոններուն համաձայն ընտրում է Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան համար, Ա. Յեղապահ, Բ. կաթողիկոսական խորհուրդ, Գ. վիճակաւոր առաջնորդներ, որոնք իրանց մօտ խորհուրդներ կ'ունենան»։ (Գլ. Բ. յօդ. ի)։

բ. — «Ամենայն Հայոց կաթողիկոսը, իբրեւ անմիջապէս քահանայապետ Հայաստանեայց եկեղեցւոյ, իրաւունք ունի արձակել, փոխել կաթողիկոսական խորհրդոյն անդամներին, վիճակաւոր առաջնորդներին իրանց պաշտօնէն, նայելով իր եկեղեցւոյ օգտին և յարգելով Հայոց ազգի կամքը։ խաղաղութիւն և կամակցութիւն են անհրաժեշտ պայմանք ժողովրդեան և նրա հոգեւոր հովիւներու մէջ»։ (Անդ. յօդ. իա)։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ԻՆՉՈՒ ԵՂԱՆ ՓՈՒՇԵՐԸ

— Ահա, փրցուր։

— Կոկոն է դեռ։

— Հոգ չէ. փրցուր։...

Ու ինկաւ, – դալար թուփին ոստը, ինչպէս մանուկ մ'իր մօր առջեւ, – ամիսփուած, ամբեթխած կոկոնը, վաղուան գեղեցկութիւնը։ — Այդ օրէն սկսեալ՝ վչտահար վարդենին փուչերով զինուեցաւ, կարմրցնելու համար այն ձեռքը, որ կը համարձակի դպչիլ իր կարմիր կոկոններուն։

Թրգմ. Հ. Ղ. Բ՞ԹԻԿԵԱՆ

ՆԵՐՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ԹԱՐԲԵՐԴԻ ՄՕՏ ԳՏՆՈՒԱՆ

Դեր. Գրիգոր վրդ. Փիլիպոսեան Խարբերդէն մեզ կը հաղորդէ Հռովմէական յետագայ արձանագրութիւնը, օրինակելով բուն քարին վրայէն։ Թէեւ Հայոցս ծանօթ Գերմանացի ճանապարհորդն Լեհման 1898ին այդ կողմերէն անցած միջոց զայն օրինակած և ապա հրատարակած է[1], բայց կարծեմք թէ այդ հրատարակութիւնը շատ քիչերուն միայն ծանօթ է և կամ միայն անուղղակի։ Ուստի շնորհակալ ըլլալով մենք մեծարգոյ վարդապետին, զայն կը հրատարակենք հոս նաեւ մեր ընթերցողաց համար, աւելցնելով հայերէն բառացի թարգմանութիւն մը և քանի մը լուսաբանութիւններ։

Արձանագիրս գտնուած է Խարբերդի հարաւ-արեւելակողմը կեսարիկ կամ կարսիկ գիւղին անմիջապէս մօտ բլրակի մը կողին վրայ, երբ աւանին պետն Օհան էֆ. Պալունի սոյն դիրքի վրայ գտնուող Ս. Մամասայ վանքին աւերակները վերականգնել կը փորձէր։ Գրուած է սա երկու կոփածոյ քարերու վրայ, որոց իւրաքանչիւրն մի մեղր լայն երկու մեղր երկայն և հինգ հարիւրորդամեղր թանձր, կը բովանդակէն միեւնոյն արձանագրութիւնը քանի մի տառերու ձեւին մէջ միայն տարբերելով իրարմէ, ինչ որ նշանակութիւն չունի մեզի համար։

Արձանագրիս ընթերցումն ինքնին շատ պարզ ըլլալով՝ աւելորդ կը համարինք բնագրին ամբողջացումը.

---

1. CIL. Nr 6741/2. հմմտ. 6743. («Հանդէս Ամս.» 1907 Ա. 24. ծան. 1)։

digitised by A.R.A.R.@